ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿԵՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Ք. Երևան

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և Էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2021թ. հոկտեմբերի 9-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 4-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 համաձայն Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի անդամ, քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեի անդամների կողմից օրակարգի վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չեն ստացվել, ուստի օրակարգը համարվել է հաստատված:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով, օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումը.

1. **30/09/21թ. «Լեռնային Արցախ»-«Փյունիկ Ակադեմիա» (ԱԽ030) խաղի մասին. «Լեռնային Արցախ» թիմի գլխավոր մարզիչ Արտաշես Ադամյանի (N2316) հեռաղման մասին:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Լեռնային Արցախ» թիմի գլխավոր մարզիչ Արտաշես Ադամյանի կողմից ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 37-րդ կետով սահմանված կարգապահական խախտում թույլ տալը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով «Լեռնային Արցախ» թիմի կողմից ստացված գրությունը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 4.05-րդ հոդվածով, որոշեց նվազեցնել կարգապահական պատասխանատվության միջոցները և «Լեռնային Արցախ» թիմի գլխավոր մարզիչ Արտաշես Ադամյանին զրկել ծառայողական պարտականությունների կատարումից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 20-ը և «Լեռնային Արցախ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

2. **29/09/21թ. «Գանձասար ՖԱ»-«Ալաշկերտ-2» (ԱԽ031) խաղի մասին. Դաշտի տեր թիմի շապիկին բացակայում էին խաղացողների ազգանուններն ու ակումբի տարբերանշանը, իսկ կիսավարտիքին՝ խաղացողների համարները:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Գանձասար ՖԱ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով 40-րդ հոդվածի 72-րդ կետով՝ «Գանձասար ՖԱ» ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «նկատողություն»:

3. **01/10/21թ. «Աչաջուր-07»-«Գանձասար-Երևան-07» (15A001) խաղին «Աչաջուր-07» թիմի ֆուտբոլիստ Դավիթ Սարուխանյանի (N 35641) հեռացման մասին (բռնարարք):**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Աչաջուր-07» թիմի ֆուտբոլիստ Դավիթ Սարուխանյանի (N 35641) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետով՝ «Աչաջուր-07» թիմի ֆուտբոլիստ Դավիթ Սարուխանյանին որակազրկել 4 խաղով և «Աչաջուր համայնքապետարան» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

4. **01/10/21թ. «Աչաջուր-07»-«Գանձասար-Երևան-07» (15A001) խաղին՝ «Գանձասար-Երևան-07» թիմի ֆուտբոլիստ Կարապետ Կենկելյանի (N 33028) հեռացման մասին (բռնարարք):**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Գանձասար-Երևան-07» թիմի ֆուտբոլիստ Կարապետ Կենկելյանի (N 33028) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետով՝ «Գանձասար-Երևան-07» թիմի ֆուտբոլիստ Կարապետ Կենկելյանին որակազրկել 4 խաղով և «Գանձասար ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

5. **02/10/21թ. «Ակադեմիա-06»-«ՈՒրարտու-1-06» (17A014) խաղի մասին. Նախախաղային խորհրդակցությանը «Ակադեմիա-06» թիմի ներկայացուցիչը չի մասնակցել:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Ակադեմիա-06» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 44-րդ հոդվածի 33-րդ կետով՝ «Տեխ. կենտրոն Ակադեմիա» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

6. **03/10/21թ. «Օնոր Ակադեմիա-05»-«ՈՒրարտու-2-06» (17B006) խաղին՝ «Օնոր Ակադեմիա-05» թիմի ֆուտբոլիստ Ռոման Եփրեմյանի (N 37340) հեռացման մասին (բռնարարք):**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Օնոր Ակադեմիա-05» թիմի ֆուտբոլիստ Ռոման Եփրեմյանի (N 37340) կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետով՝ «Օնոր Ակադեմիա-05» թիմի ֆուտբոլիստ Ռոման Եփրեմյանին որակազրկել 2 խաղով, և «Օնոր» ՍՊԸ ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

7. 29/09/21թ. «Սևան»-«Արարատ-Արմենիա» (ՊԼ038) խաղի մասին.

7.1 «Արարատ-Արմենիա» թիմի ֆուտբոլիստ Դավիթ Տերտերյանի (N 11956) հեռացման մասին (բռնարարք).

7.2 Խաղի ժամանակահատվածում դաշտի տեր ակումբի անվտանգության աշխատակիցների ոչ պատշաճ, թերի աշխատանք: «Արարատ-Արմենիա» թիմի երկրպագուների մոտ բացակայում էին կարգադրիչները:

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

1. Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի ֆուտբոլիստ Դավիթ Տերտերյանի (N 11956) կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 41-րդ հոդվածի 15-րդ կետով՝ «Արարատ-Արմենիա» թիմի ֆուտբոլիստ Դավիթ Տերտերյանին որակազրկել 3 խաղով և «Արարատ-Արմենիա» ՓԲԸ ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 ՀՀ դրամի չափով:
2. Հաստատված համարել «Սևան» ՖԱ ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետով՝ «Սևան» ՖԱ ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «նկատողություն» և տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

8. 20/09/21թ. «Ալաշկերտ»-«Նորավանք» (ՊԼ031) խաղի մասին.

8.1 Հերթական անգամ VBET և FeedConstruct ընկերությունների վահանակները շատ վատ էին փակցված:

8.2 Դաշտի տեր ակումբի մամլո քարտուղարը հերթական անգամ ներկա չէր նախախաղային ժողովին:

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Ալաշկերտ» ՖԱ ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը.

1. Ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 46-րդ կետով՝ «Ալաշկերտ» ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «նկատողություն» և տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

2. Ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 40-րդ կետով՝ «Ալաշկերտ» ՖԱ ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «նկատողություն»:

9. 22/09/21թ. «Արարատ-Արմենիա»-«Ուրարտու» (ՊԼ034) խաղի մասին. «Ուրարտու» թիմը հրաժարվել է ֆլեշ հարցազրույցին ներկայացնել ինչպես գլխավոր մարզչին, այնպես էլ Նարեկ Աղասարյանին.

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «ՖԱ Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 58-րդ կետով՝ «ՖԱ Ուրարտու» ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «նկատողություն»:

10. **27/09/21թ. «Արարատ»-«Փյունիկ» (ՊԼ039) խաղի մասին. Եզրափակիչ սուլիչից հետո մոտ 30 երեխաներ ներխուժեցին խաղադաշտ, որոնց որոշ մասը մոտեցել էր ֆուտբոլիստներին, իսկ մյուս մասը անկանոն վազվզում էր խոտածածկի վրա, կարգադրիչները ոչ մի միջոց չձեռնարկեցին միջադեպը կանխելու կամ երեխաներին դուրս հրավիրելու համար, ավելին նրանք ուղղակի լուսանկարվում էին խաղադաշտում: Խաղադաշտ ներխուժած երեխաներին դուրս էր հրավիրում Հանրապետական մարզադաշտի ղեկավարությունը:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ ՖԱ» ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետով և ելնելով այն հանգամանքից, որ հանդիպումը տեղի է ունեցել Վ. Սարգսյանի անվան Հանրապետական մարզադաշտում՝ «Արարատ ՖԱ» ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «նկատողություն» և տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

11. **28/09/21թ. «Նորավանք»-«Վան» (ՊԼ036) խաղի մասին. Նախախաղային խորհրդակցությունը ներկա չէր դաշտի տեր ակումբի մամլո քարտուղարը:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Նորավանք» ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 40-րդ կետով՝ «Նորավանք» ՍԱ ՍՊԸ ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «նկատողություն»:

12. **29/09/21թ. «Ուրարտու»-«Նոա» (ՊԼ037) խաղի մասին. «Ուրարտու» թիմի երկրպագուները հարավային տրիբունայի երկրպագուական սեկտորում խաղի 28-րդ րոպեին ճայթրուկներ վառեցին, որոնք սակայն արագ մարվեցին:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «ՖԱ Ուրարտու» ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետով՝ վերջինիս տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

13. **«Նոա աղջիկներ»-«Սուրենավան աղջիկներ» (ԿԱԽ010) խաղի մասին. Խաղը չի կայացել խաղադաշտի պատրաստ չլինելու պատճառով:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Նոա աղջիկներ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 20-րդ կետով՝ գրանցել 0:3 հաշվով պարտություն «Նոա աղջիկներ» թիմին և «Նոա» ՖԱ ՀԿ ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

Նախագահ՝ Կարեն Հովհաննիսյան

Անդամ և քարտուղար ՝ Հայկուհի Ռշտունի

Անդամներ՝ Բաբկեն Ղալոյան

Տիգրան Իսրաելյան

<u>Հիշեցում՝</u>

1. **Հոդված 19. Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկումը**

   Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումները ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել ՀՖՖ Բողոքարկման կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում, իսկ այդ դեպքում, երբ ֆուտբոլային սուբյեկտը դիմել է գործի հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 7-օրյա ժամկետը սկսում է հոսել այդ հիմքերը ստանալու պահից:

2. **Հոդված 28. Պատասխանատվության միջոցի կիրառման ընդհանուր սկզբունքները**

   28.05 Սույն կանոնակարգում ներառված՝ ֆուտբոլիստի և/կամ թիմի անձնակազմի անդամի ստացած դեղին քարտերի հետ կապված որակազրկումները (սույն կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերը) կիրառվում են առանց ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշման:

3. **Հոդված 25. Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի և ակումբի պաշտոնյաների պատասխանատվությունը**

   25.20 Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի, ակումբի պաշտոնյայի սույն կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերով սահմանված խախտումների հաշվառումը կատարում է համապատասխան ակումբը՝ առանց ՀՖՖ-ի Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշման:
   25.21 25.20 կետի պահանջները ակումբի կողմից չպահպանելը հանգեցնում է այդ ակումբի նկատմամաբ կարգապահական պատժամիջոցի՝ տեխնիկական պարտություն:

4. Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցների տուգանքները սահմանված են ՀՀ Մ-18-16 առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների համար: Մ-15 և ցածր տարիքային խմբերի առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների տուգանքները և պատժամիջոցները սահմանված են նախորդի 50%-ի չափով: Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցները սահմանվում են նաև ՀՀ Սիրողական ֆուտբոլի առաջնություններին մասնակցող սուբյեկտների համար: